Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

# ՀՐԱՀԱՆԳ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ա 24303 574

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐԱՏ. ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՅԵՎ ՊԵՏՎԱՐԿԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների
Սովետի կողմից,
22 հունիսի 1937 թ.

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

## ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՐԱՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### I. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ.

1. *ԽՍՀ Միության Պաշտպանության ամրապնդման փոխառության իրացումն սկսվում է 1937 թ. հուլիսի 2-ից և անցկացվում յուրաքանչյուր աշխատավորի փոխառությանը կամավոր կերպով մասնակցելու հիման վրա:*

2. Կոլտնտեսականները և գյուղական արհեստագործական-տնայնագործական արտելների անդամները *փոխառության պարտատոմսերը ձեռք են բերում կոլեկտիվ բաժանեգրության կարգով, վճարելով պարտատոմսերի համար, բաժանեգիրների ցանկությամբ, կամ միանվագ հենց բաժանեգրվելիս (կանխիկ հաշվով), կամ մաս-մաս վճարման կարգով:*

*Բաժանեգրությունը կոլտնտեսականների մեջ անցկացվում վոչ թե կոլտնտեսական տնտեսության, այլ յուրաքանչյուր կոլտնտեսականի համար և միայն դրամային արտահայտությամբ: Աշխօրերով բաժանեգրություն չի թույլատրվում:*

3. Մենատնտես-գյուղացիները *փոխառության պարտատոմսերը ձեռք են բերում կանխիկ հաշվով, կամ անհատական բաժանեգրությամբ մաս-մաս վճարման կարգով: Նույն կարգով են ձեռք բերում գյուղական այլ բնակչությունը (չկոոպերացված տնայնագործները, թոշակառուները և այլն):*

4. Գյուղխորհուրդների նաև գյուղական վայրերում գտնվող ձեռնարկությունների և հիմնարկությունների բանվոր-ծառայողների մեջ փոխառության կոլեկտիվ բաժնեգրությունն անցկացվում նույն պայմաններով, ինչպես բանվորների և ծառայողների մեջ քաղաքներում:

5. Կոլտնտեսականները, գյուղական արհեստագործական-տնայնագործական արտելների անդամները, մենատնտես-գյուղացիները և վարձու աշխատանքներով չզբաղված այլ քաղաքացիները, մաս-մաս մուծումներով յեղած բաժնեգրության դեպքում պարտատոմսերի արժեքը վճարում են մինչև 1938 թվականի մարտի 1-ը:

Առաջին մուծումը նրանք վճարում են իրենց ցանկությամբ կամ հենց բաժնեգրվելիս, կամ բաժնեգրությունից հետո տասն օրվա ընթացքում: Առաջին մուծման չափը վորոշվում է իրեն բաժնեգիրի կողմից: Մնացած մուծումները բաժնեգիրները վճարում են մաս-մաս վճարումների ամբողջ ժամկետի ընթացքում, այսինքն մինչև 1938 թ. մարտի 1-ը:

6. Փոխառության բաժնեգրությունը վճարվում է իրենց, կոլտնտեսականների կողմից կանխիկ դրամով:

Արգելվում է կոլտնտեսությունների վարչություններին վճարել կոլտնտեսականների բաժնեգրությունը կոլտնտեսության միջոցներից, նաև գանձել կոլտնտեսականների բաժնեգրության մուծումները կոլտնտեսականներին աշխօրերով հասնող կամ տրվող գումարներից:

7. Գյուղական արհեստագործական-տնայնագործական արտելների այն անդամները, վորոնք իրենց աշխատավարձն ստանում են արտելներում, իրենց բաժնեգրությունը վճարում են արտելի վարչության միջոցով: Այդ արտելների անդամների— փոխառության բաժնեգիրների— համաձայնությունների հիման վրա, նրանց փոխառության հերթական մուծումները գանձվում են բաժնեգիրների աշխատավարձից արտելի վարչության կողմից:

8. Գյուղխորհուրդների նաև գյուղական վայրերում գտնվող ձեռնարկությունների և հիմնարկությունների բանվորների

և ծառայողների մեջ փոխառության բաժնեգրությունն անցկաց-
վում գյուղխորհուրդներին, հիմնարկ–ձեռնարկություններին կից պետավարկին օժանդակող հանձնաժողովների կողմից:

Բանվորների և ծառայողների բաժնեգրության հաշվարկումները տեղի յեն ունենում գյուղխորհուրդներում–գյուղխորհուրդների քարտուղարների կողմից, իսկ ձեռնարկություններում— հիմնարկություններում— այդ ձեռնարկությունների և հիմնարկությունների հաշվապահությունների կողմից: Բանվորների և ծառայողների բաժնեգրության մուծումները գանձվում են բաժնեգիրների աշխատավարձից, փոխառությանը բաժնեգրվելու ժամանակ նրանց կողմից տրված հանձնարարությունների հիման վրա:

9. Գյուղական այլ բնակչության բաժնեգիրներն իրենք են վճարում բաժնեգրությունները կանխիկ դրամով:

## II. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ, ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ, ՊԵՏԱՎԱՐԿԻՆ ՅԵՎ ԽՆԱՅԳՈՐԾԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Փոխառության իրացման կազմակերպումը դրվում է շրջֆինբաժինների և կենտրոնական շրջանային խնայդրամարկղների վրա, վորոնք փոխառության աշխատանքներն անցկացնում շրջգործկոմների ղեկավարությամբ:

11. Շրջֆինբաժինների և կենտրոնական շրջանային խնայդրամարկղների վրա յե դրվում՝

ա) Փոխառության իրացման կազմակերպումը գյուղխորհուրդների միջոցով յուրաքանչյուր բնակելի վայրում:

բ) Կոլտնտեսականների, մենատնտես-գյուղացիների և գյուղական այլ բնակչության բաժնեգրության հաշվարկումների անցկացումը գյուղխորհուրդների և նրանց փոխառության լիազորների միջոցով (բաժնեգրության մուծումներն ստանալը և բաժնեգիրներին պարտատոմսեր հանձնելը):

դ) Փոխառության լրացման կարգի մասին հրահանգներ տալը գյուղխորհուրդներին և նրանց փոխառության լիազորներին և օժանդակող հանձնաժողովներին, նաև փոխառության հաշվարկման հաշվարկումների և հաշվետվության կարգի մասին վարկման հաշվարկումների և հաշվետվության կարգի մասին հրահանգներ տալը գյուղխորհուրդների քարտուղարներին:

Բացի դրանից կենտրոնական և շրջանային խնայդրամարկղների վրա են դրվում.

ա) Փոխառության բաժնեգրության անցկացման, հաշվարկման և հաշվարկումների համար գյուղխորհուրդներին բաժնեգրության թերթերով և այլ ոպերատիվ նյութերով, նաև փոխառության պարտատոմսերով մատակարարելը:

բ) Գյուղխորհուրդներում փոխառության աշխատանքների դրության և հաշվառման դրվածքի ու բաժնեգիրների հետ ունեցած հաշվարկումների հսկողություն և ստուգում:

գ) Բաժնեգրության ամբողջ գումարի հաշվառում, փոխառության հաշվարկումներ գյուղխորհուրդների հետ, փոխառության հաշվարկումներ պետական բյուջեի հետ և փոխառության մասհանումների հանձնումն տեղական բյուջեներին:

12. Գյուղխորհուրդների վրա դրվում է՝

ա) Օժանդակ հանձնաժողովների և այլ հասարակական կազմակերպությունների միջոցով, նաև կոլտնտեսությունների վարչությունների միջոցով փոխառության մասսայական-բացատրական աշխատանքներ անցկացնելը և փոխառության բաժնեգրության կազմակերպումը կոլտնտեսականների, մենատնտես-գյուղացիների և գյուղական այլ բնակչության մեջ.

բ) Իրենց լիազորների միջոցով կոլտնտեսականներից, մենատնտես գյուղացիներից և գյուղական այլ բնակչությունից մուծումներ ստանալը և հավաքած մուծումները կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղին հանձնելը:

գ) Գյուղբյուջեյից աշխատավարձ ստացող բանվորների և ծառայողների աշխատավարձից փոխառության բաժնեգրության մուծումների գանձումը և այդ գանձված մուծումները կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղին հանձնելը:

դ) Կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղում փոխա-

ության պարտատոմսեր ստանալը և բաժնեգիրներին հանձնելը։

ե) Բաժնեգրության և մուծումների գումարի հաշվառում և կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղին փոխառության սահմանված հաշվետվության ներկայացնելը։

13. Փոխառության աշխատանքները գյուղխորհուրդներում բաշխվում է հետևյալ կերպ՝

ա) Գյուղխորհրդի նախագահը ղեկավարում է փոխառության բոլոր աշխատանքները, կազմակերպում է բաժնեգրության անցկացնելը և բաժնեգիրներից մուծումներ հավաքելը, հետևում է, որ գյուղխորհրդի սահմաններում գտնվող կոլտնտեսականները, արհեստագործական-տնայնագործական արտելների անդամները և մենատնտես գյուղացիները լրիվ չափով ընդգրկվեն բաժնեգրությամբ, հսկում է, որ վճարված պարտատոմսերն իր ժամանակին հանձնվեն բաժնեգիրներին և ստուգում է փոխառության հաշվառման և հաշվետվության դրվածքը։

բ) Գյուղխորհրդի քարտուղարը վարում է փոխառության բաժնեգրության և մուծումների հաշվառումը սահմանված ձևերով ու փաստաթղթերով և փոխառության սահմանված հաշվետվությունը ներկայացնում է կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղին։

գ) Գյուղխորհրդի կողմից նրան տրված հատուկ հավատարմագրով պարտատոմսեր է ստանում կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղում, պահում է պարտատոմսերը, նաև բաժնեգիրներից ստացվող դրամական մուծումները և այդ մուծումները հանձնում է կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղին։

14. Գյուղական վերստուգիչ հանձնաժողովը գյուղխորհրդի վերստուգման ժամանակ ստուգում է, թե գյուղխորհրդի կողմից որքան ճիշտ է տարվում այս հրահանգում թված փոխառության հաշվառման և հաշվետվության ձևերը, փոխառության պարտատոմսերի և փաստաթղթերի պահելը, նաև՝ փոխառության հավաքած մուծումների ժամանակին հանձնումը կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղին։

15. Փոխառության աշխատանքների համար գյուղխորհուրդները լիազորներ են առանձնացնում ավելի ակտիվ և վստահելի հասարակական ջիղ ունեցող կոլտնտեսականներից և կոլտնտեսուհիներից և գյուղական ինտելիգենցիայից կոլտնտեսությունների վարչությունների և գյուղխորհուրդների ու կոլտնտեսությունների կից պետվարկի ու խնայգործի ոժանդակող հանձնաժողովների հաձնարարությամբ:

Լիազորները հաստատվում են շրջգործկոմի նախագահության կողմից՝ գյուղխորհրդի առաջադրանքով: Լիազորները փոխառության աշխատանքներից կարող են ազատվել միայն շրջգործկոմի նախագահության վորոշմամբ:

Շրջգործկոմի վորոշմամբ լիազորներ հաստատելուց հետո, յուրաքանչյուր լիազոր ձև Նո. 4 բլանկի վրա պարտավորագիր է տալիս գյուղխորհրդին: Միաժամանակ գյուղխորհուրդը տալիս է լիազորին սահմանված ձևի վկայական կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղի վարիչի և գյուղխորհրդի նախագահի ստորագրությամբ:

16. Լիազորները կցվում են գյուղխորհուրդների կողմից, բաժնեգիրների մի վորոշ խմբակին, մուծումների հավաքի ամբողջ ժամանակ:

17. Գյուղխորհրդի փոխառության լիազորների վրա յե դրվում՝

ա) Փոխառության մասին բացատրական աշխատանք անցկացնելն այն բաժնեգիրների մեջ, վորոնց կցված է լիազորը գյուղխորհրդի կողմից:

բ) Փոխառության բաժնեգրության անցկացնելը.

գ) Բաժնեգիրներից մուծումներ հավաքելը և հավաքված մուծումները գյուղխորհրդի քարտուղարին հանձնելը:

18. Գյուղխորհուրդներին և կոլտնտեսություններին կից պետվարկին և խնայգործին ոժանդակող հանձնաժողովները՝

ա) Անց են կացնում փոխառության մասսայական—բացատրական աշխատանք.

բ) Ստուգում են բաժնեգիրների հետ ունեցած փոխառու-

թյան հաշվարկումների ճշտությունը և վճարված պարտատոմսերը ժամանակին բաժնեգիրներին հանձնելը:

19. Կոլտնտեսությունների վարչությունները ակտիվ օգնություն են ցույց տալիս գյուղխորհուրդներին և նրանց լիազորներին՝ մասսայական—բացատրական աշխատանքներ և փոխառության բաժնեգրություն անցկացնելու գործում:

20. Շրջֆինբաժինների, կենտրոնական և շրջանային խնայդրամարկղների ղեկավարները և գյուղխորհուրդների նախագահները պատասխանատվություն են կրում փոխառության հաջող իրացման համար, փոխառության բաժնեգրության միջոցները ժամանակին և լրիվ չափով գանձելու և պարտատոմսերը ժամանակին բաժնեգիրներին հանձնելու համար:

Գյուղխորհուրդները պատասխանատվություն են կրում պարտատոմսերը ժամանակին բաժնեգիրներին հանձնելու փոխառության հավաքած միջոցները ժամանակին խնայդրամարկղներին հանձնելու և նյութական պատասխանատվություն են կրում պարտատոմսերը և փոխառության համար բաժնեգիրներից ստացված դրամը անվթար պահելու համար:

## III. ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

21. Փոխառության օրենքը հրապարակվելուց անմիջապես գյուղխորհուրդները, կոլտնտեսությունների վարչությունները և օժանդակող հանձնաժողովները պարտավոր են մինչ բաժնեգրության սկիզբն ապահովելու կոլտնտեսականների և մենատնտես գյուղացիների ժողովներ անցկացնելը:

22. Փոխառության բաժնեգրությունն ընդունում են գյուղխորհրդի լիազորները՝ գյուղխորհրդից ստացված բաժնեգրության թերթիկների վրա:

Գյուղխորհուրդների նախագահները պարտավոր են իրենց փոխառության լիազորներին մատակարարելու կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղներից ստացված բաժնեգրության թերթերով:

23. Բաժնեգրություն անցկացնելիս՝ լիազորները պարզում են, թե յուրաքանչյուր բաժնեգիր ինչ գումարով և փոխառության որ մասին է ցանկանում բաժնեգրվել (անպայման շահող կամ տոկոսաբեր):

Լիազորը լրացնում է բաժնեգրության թերթը, գրելով համապատասխան սյունյակում բաժնեգրի ազգանունը, անունը և հայրանունը և նրա բաժնեգրության գումարը:

Բաժնեգիրը սեփական ձեռքով ստորագրում է բաժնեգրության թերթում, հաստատելով իր ստորագրությամբ իր բաժնեգրության գումարը:

Լրացրած բաժնեգրության թերթերը լիազորը պարտավոր է հանձնելու գյուղխորհրդին առանց ձգձգումների:

24. Գյուղխորհրդի քարտուղարը պարտավոր է ստուգելու բաժնեգրության թերթերի լրացման ճշտությունը (մասնավորապես հավաստիանալ բաժնեգիրների սեփական ստորագրությունների առկայության մեջ): Այդ բաժնեգրության թերթերի հիման վրա գյուղխորհրդի քարտուղարը տանում է բաժնեգրության հաշվառումը և բաժնեգիրների հետ ունեցած հաշվարկումները:

Կտրականապես արգելվում է գյուղխորհրդին հանձնված բաժնեգրության թերթերում որևէ փոփոխություններ կամ ուղղումներ մտցնել գրանցումներում, առանց բաժնեգիրների համաձայնության:

25. Դպրոցականների մեջ (տարրական, ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցի աշակերտներ) փոխառության բաժնեգրություն չի անցկացվում:

## IV. ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ՄՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄԸ

26. Բաժնեգիրներից մուծումները հավաքելու համար, գյուղխորհրդի քարտուղարը (կամ նրա հսկողությամբ գյուղխորհրդի լիազորը) յուրաքանչյուր բաժնեգրի համար լրացնում է փոխառության բաժնեգրության հաշվարկային անդորրագիր (և նրա արմատը) ձև № 52-ով:

Բաժնեգիրներից առաջին մուծումն ստանալու հետ միաժամանակ, բայց վոչ ուշ, քան 10 օր սկսած բաժնեգրության օրից, լիազորը պարտավոր է տալ յուրաքանչյուր բաժնեգրի ձեռքը փոխառության բաժնեգրության հաշվարկման անդորրագիր, ստորագրել տալով նրան անդորրագրի արմատի վրա:

Մինչև բաժնեգրության հաշվարկումների լրիվ վերջանալը. անդորրագիրը մնում է բաժնեգիրների մոտ, իսկ անդորրագրային գրքույկը նրանում մնացած արմատներով պահվում է գյուղխորհրդի լիազորի մոտ:

27. Փոխառության բաժնեգրության ժամանակ յուրաքանչյուր բաժնեգիր հայտնում է, թե ինչպիսի ժամկետներում պիտի ինքը վճարի գյուղխորհրդի լիազորին իր բաժնեգրության մուծումները: Հայտնած ժամկետները նշվում են բաժնեգիրներին տրվող հաշվարկային անդորրագրերում: Փոխառությանը բաժնեգիրը պարտավոր է պահպանելու իր կողմից սահմանված փոխառության բաժնեգրության մուծումների ժամկետները: Կենտրոնական և շրջանային խնայդրամարկղները, գյուղխորհուրդները, օժանդակող հանձնաժողովները և փոխառության լիազորները պարտավոր են հետևելու այն բանին, վորպեսզի փոխառությանը ժամկետներով բաժնեգրված քաղաքացիները ժամանակին վճարեն փոխառության մուծումները: Փոխառության բաժնեգրության հարկադիր գանձման միջոցներն արգելվում են:

Լիազորը պարտավոր է բաժնեգրի կողմից հայտարարված ժամկետներում ստանալ նրանցից հասանելիք մուծումները և գրանցել յուրաքանչյուր մուծումը վճարելու ժամանակ բաժնեգրի կողմից ներկայացվող անդորրագրում, նաև լիազորի մոտ պահվող այդ անդորրագրի արմատում:

Լիազորը ստորագրում է բաժնեգրի կողմից ներկայացվող անդորրագրում, իր ստորագրությամբ հաստատելով մուծումի ստացումը:

Բաժնեգիրը միաժամանակ ստորագրում է անդորրագրի արմատում, իր ստորագրությամբ հաստատելով մուծումի վճարման գումարն ու օրը:

Լիազորներն իրավունք չունեն բաժնեգրից մուծումներ ըն-

դունելու առանց հաշվարկման անդորրագրում և անդորրագրի արմատում գրանցելու:

28. *Լիազորները պարտավոր են ամեն օր հանձնելու գյուղխորհրդի քարտուղարին բաժնեգիրներից հավաքած մուծումները, յեթե լիազորների աշխատանքն անց են կացնում գյուղխորհրդի գտնվող վայրում և* վոչ պակաս, քան յերեք օրը մեկ անգամ *յեթե լիազորները մուծումների հավաքն անց են կացնում գյուղխորհրդի հետ վոչ միևնույն վայրում գտնվող կոլտնտեսություններում կամ գյուղերում:*

*Հավաքած մուծումները գյուղխորհրդին հանձնելիս՝ լիազորները պարտավոր են ներկայացնելու գյուղխորհրդի քարտուղարին հաշվարկային անդորրագրերի արմատները: Գյուղխորհրդի քարտուղարը պարտավոր է ստուգելու անդորրագրերի արմատներով լիազորի կողմից հանձնվող գումարի ճշտությունը:*

*Գյուղխորհրդի քարտուղարը անդորրագրերի նույն արմատների հիման վրա գրանցում է ձև* № 53 *հաշվարկային տեղեկագրում յուրաքանչյուր բաժնեգրից ստացված մուծումները:*

29. *Յուրաքանչյուր ամսի մեկին գյուղխորհրդի բոլոր լիազորները ստուգման համար պիտի ներկայացնեն գյուղխորհրդի քարտուղարին իրենց մոտ պահվող անդորրագրային գրքույկները, անդորրագրերի արմատների հետ միասին:*

*Գյուղխորհրդի քարտուղարը պարտավոր է հավաստիանալ այն բանում, թե կան արդյոք անդորրագրերի արմատների վրա բաժնեգիրների ստորագրությունները և ստուգելու է բաժնեգիրներից հավաքած մուծումները լիազորների կողմից գյուղխորհուրդներին հանձնելու լրիվությունն ու իր ժամանակին լինելը:*

30. *Յեթե բաժնեգիրներն իրենց փոխառության բաժնեգրության մուծումներն անմիջականորեն վճարում են գյուղխորհրդին, ապա նրանցից դրամ ընդունելը գյուղխորհրդում կատարում է գյուղխորհրդի քարտուղարը: Գյուղխորհրդի քարտուղարը ձևակերպում է դրամի ընդունումը բաժնեգիրներից նույն կարգով, ինչպիսին սահմանված է մուծումները լիազորների կողմից ընդունելու համար* (հոդ. 27): *Այդ բաժնեգիրների հաշվարկային անդորրագրերի արմատները պիտի պահվեն գյուղխորհրդի քարտուղարի մոտ:*

## V. ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԲԱԺՆԵԳԻՐՆԵՐԻՆ:

31. Գյուղխորհուրդը պարտավոր է պարտատոմսերը հանձնելու բաժնեգիրներին նրանցից յուրաքանչյուրի կողմից բաժնեգրության դիմաց վճարված գումարի չափով:

Պարտատոմսերը հանձնում է բաժնեգիրներին գյուղխորհրդի քարտուղարը լիազորի ներկայությամբ, բաժնեգրի կողմից հաշվարկային անդորրագիրը ներկայացնելուց և անդորրագիրը լիազորի մոտ գտնվող արմատի հետ անպայման համեմատելուց հետո: Անդորրագրի արմատի վրա վերցվում է բաժնեգրի ստորագրությունը պարտատոմսերն ստանալու մասին:

Պարտատոմսերը բաժնեգրին հանձնելիս գյուղխորհրդի քարտուղարն իր մոտ է թողնում բաժնեգրի անդորրագիրը, վորը պետք պահվի գյուղխորհրդում նրա արմատի հետ միասին:

Ծանոթություն.— Շրջխնայդրամարկղը պարտատոմսերը հանձնում է գյուղխորհրդի քարտուղարին գյուղխորհրդի հավատարմագրով (ձև № 140 բլանկների վրա): Հավատարմագրով հանձնված պարտատոմսերի գումարի մասին խնայդրամարկղը գրավոր հայտնում է գյուղխորհրդին:

32. Բաժնեգրության ժամկետները վերջանալուց հետո, այսինքն վոչ ուշ 1938 թ. մարտի 1-ից, գյուղխորհուրդը պարտավոր է ստուգելու, թե բաժնեգիրներից վորը դեռ պարտատոմսեր չի ստացել և 10 որվա ընթացքում պարտատոմսերը հանձնում է այն բաժնեգիրներին, վորոնք լրիվ չափով վճարել են պարտատոմսերի արժեքը:

Այն դեպքերում, յերբ գյուղխորհրդից անկախ պատճառներով (բաժնեգրի այլ տեղ մեկնելը, յերկարատև հիվանդությունը և այլն) հնարավոր չէ պարտատոմսերը հանձնելու առանձին բաժնեգիրներին, գյուղխորհուրդը պարտավոր է այդ պարտատոմսերը հանձնել (առանց այդպիսիք բաժնեգիրներին ամրացնելու) կենտրոնական շրջանային խնայդրամարկղին վոչ ուշ քան 1938 թ. մայիսի 25-ը: Պարտատոմսերը հանձնվում են բաժնեգիրների ցուցակի հետ, նշելով յուրաքանչյուր բաժնեգրի կողմից վճարված գումարը: Ցուցակին կցվում են այդ բաժնեգիր-

ների հաշվարկային անդորրագրերի արմատները: Ցուցակի պատճեն գյուղխորհուրդը պահում է իր մոտ:

33. Գյուղխորհրդում պարտատոմսեր չստացած բաժնեգիրները կարող են վճարված գումարի չափով պարտատոմսեր ստանալ կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղում մինչև 1939 թ. հունիսի 1-ը:

Պարտատոմսերը խնայդրամարկղում ստանալու համար բաժնեգիրները պարտավոր են ներկայացնել բաժնեգրության վճարումը հաստատող իրենց մոտ յեղող հաշվարկային անդորրագրերը:

1939 թ. հունիսի 1-ից, պարտատոմսեր չստացած բաժնեգիրները, կորցնում են պարտատոմսեր ստանալու իրավունքը և այդ պարտատոմսերն անցնում են պետական բյուջեի յեկամուտին:

## VI. ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒՄ

34. Գյուղխորհուրդը պարտավոր է հաշվի առնել՝

ա) Յուրաքանչյուր բաժնեգրի բաժնեգրման գումարը— հաշվարկման տեղեկագրերում (ձև № 53), վորոնք տարվում են առանձին լիազորի կողմից սպասարկվող բաժնեգիրների առանձին յուրաքանչյուր խմբի համար:

Գյուղխորհրդի քարտուղարը լրացնում է հաշվարկային տեղեկագիրը այն բաժնեգրության թերթերի հիման վրա, վորոնք հանձնված են յուրաքանչյուր լիազորի կողմից բաժնեգրությունն անցկացնելուց հետո: Քարտուղարը գրանցում է հաշվարկային տեղեկագրում նաև այն անձանց, վորոնք պարտատոմսերը ձեռք են բերել կանխիկ հաշվով:

բ) Յուրաքանչյուր բաժնեգրից ստացված բաժնեգրության մուծումները և յուրաքանչյուր բաժնեգրին հանձնած պարտատոմսերի գումարը— հաշվարկային տեղեկագրում (ձև № 53):

Գյուղխորհրդի քարտուղարը գրանցում է հաշվարկային տեղեկագրում (ձև № 53) բաժնեգիրներից ստացված մուծումները— հաշվարկային անդորրագրերի արմատների հիման վրա

(ձև № 52), որոնք ներկայացվում են յուրաքանչյուր լիազորի կողմից բաժնեգրության հավաքած գումարները հանձնելու ժամանակ (այս հրահանգի 28 հոդվածը), դրա հետ միասին գյուղխորհրդի քարտուղարը անդորրագրի յուրաքանչյուր արմատի վրա նշում է անում այն մասին, որ մուծումների գումարը գրանցված է հաշվարկային տեղեկագրում: Հաշվարկային տեղեկագրում գրանցվում է նաև բաժնեգիրներին հանձնված պարտատոմսերը:

գ) Յուրաքանչյուր լիազորից ստացված բաժնեգրության մուծումների ընդհանուր գումարը — դրամարկղային գրքում (ձև № 26) 7-րդ սյունյակում և, բացի այդ, լիազորի անձնական հաշվում «Հաշվետու անձանց, զանազան գումարների և հաշվարկումների» գրքում (ձև № 28):

Գյուղխորհրդի քարտուղարը փոխառության լիազորների հետ ունեցած հաշվարկումների հաշվառման համար «Հաշվետու անձանց զանազան գումարների և հաշվարկումների» գրքում (ձև № 28) բացում է առանձին հաշիվ յուրաքանչյուր լիազորի համար հետևյալ վերնագրով՝

«Հաշիվ . . . . . . . . . . . . . . .

(լիազորի ազգանունը)

որը սպասարկման համար կցված է

. . . . . . . . . . . . . . . .

(նշել կոլտնտեսականներին և թե որ կոլտնտեսությունից են, մենատնտես-գյուղացիներ և թե որ գյուղից են և այլն):

Բաժնեգիրների խմբին.

Գյուղխորհրդի քարտուղարը բաժնեգրության հավաքած գումարները լիազորներին հանձնելիս գրանցում է ստացված գումարը անձնական հաշվի 4-րդ սյունյակում և տալիս է լիազորին ձև № 22-Ա. ձևի անդորրագիր՝, թողնելով իր մոտ այդ անդորրագրի արմատը: Գյուղխորհրդի քարտուղարը փոխառության լիազորից դրամական գումարները ընդունելու համար առանձնացնում է առանձին անդորրագրային գրքույկ (ձև № 22-Ա):

դ) Գյուղխորհրդի կողմից խնայդրամարկղից ստացված պարտատոմսերը—*«Պարտատոմսերի հաշվառման տեղեկագրում», որը կցված է դրամարկղային գրքին (ձև № 26):*

*Գյուղխորհրդի քարտուղարը խնայդրամարկղից ստացված պարտատոմսերը մուտք է գրում տեղեկագրի 1—3 սյունյակում: Բաժնեգիրներին հանձնվող պարտատոմսերը ելք է գրանցում տեղեկագրի 4—6 սյունյակում, 7-րդ սյունյակում վերցվում է պարտատոմսեր ստացած բաժանորդի ստորագրությունը:*

ե) Հաշվարկման անդորրագրերի գրքույկների *(ձև № 52) ստացված խնայդրամարկղից— «Փոխառության անդորրագրային գործարքների հաշվառման տեղեկագրում», որը կցված է դրամարկղային գրքին (ձև № 26):*

*Խնայդրամարկղում հաշվարկային անդորրագրեր ստանալու իրավունք ունի միայն գյուղխորհրդի քարտուղարը գյուղխորհրդի կողմից տրված հավատարմագրով: Հաշվարկային անդորրագրերը գյուղխորհրդի քարտուղարին հանձնելու հետ միաժամանակ, խնայդրամարկղը ծանուցագիր է ուղարկում գյուղխորհրդին նշելով հանձնած գրքույկների քանակը և անդորրագրերի համարները: Այդ ծանուցագրերը, որ ստորագրվում են խնայդրամարկղի վարիչի և հաշվապահի կողմից ծառայում են գյուղխորհրդի համար որպես մի այնպիսի փաստաթուղթ, որի հիման վրա մուտք են լինում անդորրագրային գրքույկները: Հաշվարկային անդորրագրերի ստացման հետևյալ օրը գյուղխորհուրդը պիտի հաստատում ուղարկի խնայդրամարկղին անդորրագրային գրքույկների ստացման մասին: Այդ հաստատումներն ստորագրում է գյուղխորհրդի նախագահը և քարտուղարը:*

Ծանոթություն.— *Լրացրած բաժնեգրության թերթերը, հաշվարկային անդորրագրերը և նրանց արմատները, հաշվարկային տեղեկագրերը և կից տեղեկագրերի պատճենները (ձև № 54) պահվում են գյուղխորհրդում դրամական փաստաթղթերին հավասար մինչ 1939 թ. հունիսի 1-ը:*

35. *Գյուղխորհրդի քարտուղարը պարտավոր է անձամբ կամ փոստով հանձնելու կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղին*

փոխառության բոլոր այն դրամները, որոնք ստացվում են գյուղխորհրդում կոլտնտեսականներից, մենատնտես գյուղացիներից և այլք, նաև գյուղխորհրդի բանվորների և ծառայողների աշխատավարձից իրենց բաժնեգրության համար գանձված մուծումները հետևյալ ժամկետներում յուրաքանչյուր ամսի 3-ին, 8-ին, 13-ին, 18-ին, 23-ին և 28-ին փոխառության դրամների ստացման չափով: Դրամը հանձնվում է հարակից տեղեկագրին կից (ձև № 54): Հարակից տեղեկագիրը կազմվում է 2 օրինակից վճարողներից ստացված փոխառության գումարների մասին անձնական հաշիվներում կատարված գրանցումների հիման վրա, որոնք բացված են «Հաշվետու անձանց զանազան գումարների» գրքում (ձև № 28):

Բանվոր-ծառայողների բաժնեգրությամբ ստացված գումարների գրանցումը հարակից տեղեկագրում, արվում է «աշխատավարձ վճարելու տեղեկագրի» հիման վրա (ձև № 31), որտեղ նշվում է բաժնեգիրների աշխատավարձից գանձված մուծումները:

Հարակից տեղեկագրի մեկ օրինակը մնում է գյուղխորհրդում և պահվում է դրամն ընդունելու համար տրված փոստի անդորրագրի հետ միասին (կամ խնայդրամարկղի անդորրագրի հետ), հարակից տեղեկագրի երկրորդ օրինակը ուղարկվում է (հանձնվում է) խնայդրամարկղին դրամն ուղարկելու (հանձնելու հետ միաժամանակ):

Ծանոթություն.— *Փոստի հիմնարկին փոխառության գումարի փոխադրման համար վճարվող գումարը նաև հարակից տեղեկագիրն ուղարկելու ծախսերը գյուղխորհուրդը պահում է փոխադրվող գումարներից և այդ փոստի ծախսը ցույց է տալիս հարակից տեղեկագրի «փոստով փոխադրելու ծախսեր» տողում:*

36. Գյուղխորհուրդը պարտավոր է ներկայացնելու կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղին փոխառության բաժնեգրության ընթացքի մասին հաշվետու տեղեկություններ № 21 ձևով նախագահի և քարտուղարի ստորագրություններով:

Այդ տեղեկությունները ներկայացվում են կենտրոնական (շրջանային) խնայդրամարկղներին հետևյալ ժամկետներին՝ հու-

A 24308

լիսի 3-ին, 8-ին, 13-ին, 18-ին, 23-ին, 28-ին, օգոստոսի 13-ի և 28-ին, իսկ 1937 թ. սեպտեմբերից սկսած յուրաքանչյուր ամ սի 28-ին մինչև փոխառության հաշվարկումների վերջանալը:

Ծանոթություն.— № 21 ձևով տեղեկություններ կազմե լու կանոնները նշված են այդ տեղեկությունների բլանկնե հակառակ յերեսում:

37. Բաժնեգրության հաշվարկումները վերջանալուց հետ գյուղխորհուրդները պարտավոր են ԽՍՀՄ Ֆինժողկոմատի կող մից սահմանվող ժամկետին, նախագահի և քարտուղարի ստո րագրություններով ներկայացնելու կենտրոնական (շրջանային խնայդրամարկղին № 17 ձևով հաշվետվություն փոխառությա ստացված և ծախսված պարտատոմսերի մասին:

38. Դիտավորյալ կերպով խեղաթյուրված հաշվետու տեղե կությունները ներկայացնելու, նաև նրանց ներկայացնելու ժամ կետները սիստեմատիկ և չարամիտ կերպով խախտելու համա մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվությա ԽՍՀՄ ԿԳԿ և ԺԿԽ 1933 թ. նոյեմբերի 27-ի վորոշման հիմա վրա «սխալ հաշվառման տեղեկություններ և հաշվետու տվյալ ներ, նաև հաշվառման-հաշվետու նյութերը ներկայացնելու ձև վերն ու ժամկետները խախտելու համար պատասխանատու և նելու մասին» («ԽՍՀՄ Օ. Ժ.» 1933 թ. № 70, հոդ. 417):

## VII. ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՅԵ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

39. Գյուղխորհրդի քարտուղարները փոխառության ա խատանքների համար վարձատրություն են ստանում կոլտնտես կանների, տնայնագործական-արհեստագործական արտելների անդամների, մենատնտես-գյուղացիների ինչպես նաև վարձո աշխատանքով չզբաղվող գյուղական այլ բնակչության բաժնե գրության գծով մուծված գումարի $1/2$ տոկոսի չափով:

Տնայնագործական-արհեստագործական արտելի անդամների բաժնեգրությունից, վորոնք վճարում են պարտատոմսի արժեք արտելի վարչության միջոցով (հրահանգի 7-րդ հոդ.) գյուղ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0001967

ի քարտուղարներին վարձատրություն չի տրվում:
ւղական խորհուրդների լիազորները փոխառության աշ-
քները կատարելու համար վարձատրություն են ստա-
ւրաքանչյուր լիազորի կողմից փոխառության դիմաց
րեն հավաքած գումարի 2 տոկոսի չափով:
· Գյուղական խորհրդի քարտուղարի և փոխառության
ների վարձատրությունը տրվում է կենտրոնական (շրջա-
) խնայողական դրամարկղի կողմից 2 ժամկետներում 1937
կտեմբերի 1-ին և փոխառության հաշվարկումներն ա-
ուց հետո:
խառության լիազորների վարձատրությունը վճարում է
նական (շրջանային) խնայդրամարկղը գյուղխորհրդի
ազմած ցուցակով:
ւցակում ցույց է տրվում լիազորների ազգանունները և
ի կողմից հավաքված գումարը:
նտրոնական (շրջանային) խնայդրամարկղը փոխառության
ների վարձատրությունը կատարում է կամ անմիջականո-
ամ գյուղխորհրդի միջոցով:
երջին դեպքում գյուղխորհուրդն ի հաստատումն այն բա-
ր իրոք լիազորների վարձատրությունը հանձնված է,
ացնում է կենտրոնական (շրջ) խնայդրամարկղ լիազոր-
տորագրությունները:

ՍՀ Միության ֆինանսների ժողովրդական կոմիսար՝
ԳՐԻՆԿՈ

տական աշխատավորական խնայողական դրամարկղների
ական Վարկի գլխ. վարչության պետ՝
ՈԶԵՐՅԱՆՍԿԻ

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

խոր լիազոր 2176 Տիրաժ 6000
եր 913
ատի տպարան, Երևան Լենինի, 65

316

Գ Ի Ն

[064.]

ЦЕНА

24308

Пров. 1940 г.

Пров.